ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

------- 2024 թվականի №-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԼԲԵՐՏ ՍՈՂՈՄՈՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշման համաձայն (այսուհետ՝ Որոշում)՝ անհատ ձեռնարկատեր Ալբերտ Սողոմոնի Պետրոսյանը մինչև 2024 թվականի մայիսի 25-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ նույն որոշման №5 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2023 թվականի տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն),

բ) անհատ ձեռնարկատեր Ալբերտ Սողոմոնի Պետրոսյանը Հաշվետվությունը Հանձնաժողով է ներկայացրել սահմանված ժամկետից հետո՝ 2024 թվականի մայիսի 29-ին,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2024 թվականի հուլիսի 8-ից Հանձնաժողովն անհատ ձեռնարկատեր Ալբերտ Սողոմոնի Պետրոսյանի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 8-ի № ԳԲ/34.2-Մ2-7/3075-2024 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում պարզվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից անհատ ձեռնարկատեր Ալբերտ Սողոմոնի Պետրոսյանը 2024 թվականի հուլիսի 12-ից հաշվառումից հանվել է,

ե) «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզավորված գործունեություն

իրականացնող իրավաբանական անձի լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցվելու կամ ֆիզիկական անձի մահվան դեպքերում, իսկ նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ նշված հիմքերով լիցենզիայի գործողությունը համարվում է դադարեցված՝ լիցենզավորված իրավաբանական անձի լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցվելու կամ ֆիզիկական անձի մահվան օրվանից:

զ) հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նույն հոդվածի 11-րդ մասը և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Ալբերտ Սողոմոնի Պետրոսյանի՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2024 թվականի հուլիսի 12-ից հաշվառումից հանված լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 19-ի №246-Ա որոշմամբ 2024 թվականի հուլիսի 12-ից ուժը կորցրած է ճանաչել Հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 22-ի «Անհատ ձեռնարկատեր Ալբերտ Սողոմոնի Պետրոսյանին հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» №46Ա որոշումը,

է) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթ չի հարուցում, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե կարգավորվող անձը լուծարվել կամ մահացել է:

ը) «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենքով առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից:

թ) Ղեկավարվելով նշված իրավակարգավորումներով և հաշվի առնելով վերոնշյալ փաստական հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ առկա է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված՝ վարույթի կարճման հիմք, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել անհատ ձեռնարկատեր Ալբերտ Սողոմոնի Պետրոսյանի նկատմամբ 2024 թվականի հուլիսի 8-ին հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալբերտ Սողոմոնի Պետրոսյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- -------ի 2024թ.